

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

PHILOLOGY

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

grakanagetgasparyan@mail.ru

ORCID: 0009-0004-7317-4535

DOI: 10.54503/1829-4073-2024.1.131-149

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ – ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆ

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ

Եղիշե Չարենց
Նիկոլ Աղբալյան
Հայաստանի
Հանրապետություն
պառլամենտ
«Պանդոկ» գրական ակումբ
Հայաստանի գրական
ընկերություն
ռադիոպոեմ

ԱՄՓՈՓՈՒՄ

Նիկոլ Աղբալյանն առաջին իսկ գրական քայլերից նկատել էր բարձրացող հանճար Ե. Չարենցին և մտադիր էր նրան նվիրել հրապարակային դասախոսություն: Այդ հարցը քննարկել էր Հ. Թումանյանի հետ և ստացել նրա աջակցությունը:

ՀՀ կառավարության մեջ Աղբալյանն ստանձնեց արվեստի և կրթության ոլորտը՝ ստեղծեց Հայ գրողների ընկերությունը, սատարեց «Պանդոկ» գրական խմբակի գործունեությանը:

1919 թ. հոկտեմբերի 16-ին Գրական ընկերությունը Պառլամենտի դահլիճում հրավիրում է երեկոյի: Ն. Աղբալյանը խոսել է մոտ մեկուկես ժամ և ըստ ամենայնի ներկայացրել և՛ թեմայով, և՛ պոետիկայով նոր բանաստեղծ Ե. Չարենցին: Ելույթ են ունեցել գրական տարբեր հեղինակություններ: Չարենցը դարձել է որոնված անուն:

Ինքը՝ Չարենցը, այդ երեկոյին ներկա չի եղել, քանի որ Կարսի մարզում զբաղված էր ուսուցչությամբ: Աղբալյանի զեկուցման մասին տեղեկանում է մամուլից և ավելի, քան

* Հոդվածը ներկայացվել է 25.12.23, գրախոսվել է 25.01.24, ընդունվել է տպագրության 30.04.24:

Գասպարյան Դ.

երեք ամիս հետո ներկայանում նրան: Վերջինս նրան ջերմորեն է դիմավորում և նախարարությունում առաջարկում համեստ մի պաշտոն: Դժվար ժամանակներ էին. Աղբայանը Չարենցին տալիս է ապրելու և ստեղծագործելու հնարավորություն:

Այս երկու մեծությունների գրական առնչությունը հայ գրականության պատմության հիշարժան փաստ է:

Ներածություն

Նիկոլ Աղբայանը՝ որպես հանրային կրթության և արվեստի նախարար, զբաղված էր նորաստեղծ հանրապետության կրթամշակութային շինարարությամբ:

1919 թ. սեպտեմբերի 28-ին նրա նախագահությամբ Երևանում հիմնադրվում է **Հայաստանի գրական ընկերությունը**¹: Մեծ գյուղի՝ մայրագյուղի տպավորություն թողնող Երևանը նաև այսպիսի նախաձեռնություններով պետք է աստիճանաբար նմանվեր մայրաքաղաքի: Ընկերության անդամներ են ընտրվում Լեռ Կամսարը, Բախշի Իշխանյանը, Համբարձում Մազմանյանը, Վեսպերը, Շահան Նաթալին, Խաչիկ Սամվելյանը, Արշավիր Խոնդկարյանը և ուրիշներ:

Գրական գործի կազմակերպման նպատակով նույն օրերին ստեղծվում է նաև **«Պանդոկ» գրական ակումբը**. «Երևանում կազմակերպվել էր Հայաստանի գրողների միություն: Գրողների միությունից զատ՝ այդ միության մոտ 15 անդամներից կազմվել էր գրական խմբակ «Պանդոկ» անունով» (Վարդգես Ահարոնյան, «Լևոն Շանթը իր մասին»)²: Հ. Թումանյանի «Վերնատան» օրինակով գաղափարը Լ. Շանթին էր, «Պանդոկ» անունն առաջարկել է բանաստեղծ Ոստանիկը: Ավագներից հավաքներին մասնակցել են Լ. Շանթն ու Ն. Աղբայանը, երիտասարդներից՝ Ստ. Զորյանը, Ռենը (Ռուբեն Վարդանյան), Գառնիկ Քալաշյանը, Ոստանիկ Հովհաննիսյանը, Վահրամ Թերզիբաշյանը, Անուրջը, Դավիթ Անանունը, Վահան Խորենին, Արմենուհի Տիգրանյանը, Պերճուհի Բսեղյանը, Անուշ Քալաշյանը, 1920 թ. հունվարի վերջին Երևանում հաստատվելուց հետո նաև՝ Ե. Չարենցը: Շաբաթը մեկ խմբակը հավաքվում էր «Ռոստոմ» գրադարանում, թիթեղյա վառարանի շուրջ, որի նավթը նախարարության պահեստից տրամադրում էր Ն. Աղբայանը: Կարդում էին իրենց նոր գործերը, քննարկում, բանավիճում:

¹ «Հայաստանի կոոպերացիա», 15.10.1919, թիվ 16:

² «Լևոն Շանթ: Մարդը և գործը», 2019, 20:

«Մի նոր բանաստեղծ – Չարենց»

Հայաստանի Գրական ընկերությունը կազմակերպում է միջոցառումներ, որոնցից հիշարժանը եղել է երկրորդ երեկոն՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենց»: Ե. Չարենցը Ն. Աղբալյանի ուշադրությունը գրավել էր ավելի վաղ: 1917 թ. ամռան մտաբերումով Նվարդ Թումանյանը գրում է. «Վերադարձանք Թիֆլիս: Նիկոլ Աղբալյանն էր մոտը [Հ. Թումանյանի – Դ. Գ.]. «Օհաննէս, քեզ ո՞նց է դուր գալիս մեր էս նոր բանաստեղծը. գլխի՞ ես ում մասին եմ ասում՝ Չարենցի: Երեկ ձեռքիս նրա նոր գիրքն էր՝ «Ծիածանը». մի կարդա, տես, տաղանդավոր տղա է երևում: Նոր բան է ասում, էն էլ նոր ձևով. թարմություն կա մեջը, թափ ունի. մտքումս կա մի դասախոսություն կարդամ նրա մասին»:

Որոշեցին գրողների ընկերության հերթական երեկույթներից մեկը նվիրել Չարենցին»³:

Ահա դասախոսության ազդագիրը. «Հիշեցնում ենք հայ գրասերներին, որ այսօր պառլամենտի դահլիճում երեկոյան ժամը 8-ին կայանալու է Հայաստանի գրական ընկերության հերթական ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ, ուր Ն. Աղբալյանը խոսելու է՝ «Մի նոր բանաստեղծ – Չարենցի» մասին»⁴:

Մարդիկ եկել էին տոմսակներով, դահլիճը լիքն էր:

Մինչ այդ նախատեսվել էր Ե. Չարենցին նվիրված երեկոն անցկացնել հոկտեմբերի 11-ին, բայց հետաձգվել էր:

ՀՌԿ օրգան «Հայաստանի ծայն» հասարակական, քաղաքական և գրական թերթը հոկտեմբերի 30-ի 9-րդ համարում Հ.Ս. ստորագրությամբ լրատվության մեջ հայտնում է. «Հայաստանի Գրական ընկերության Բ. գրական երեկոն տեղի ունեցավ ամսույս 16-ին, շաբաթ օրը՝ երեկոյան ժամը 8-ին, պարլամենտի սրահին մեջ:

Երեկոյթը կազմված էր երկու մասե, գրական և գեղարվեստական: Ա. Բաժնի մեջ ընկերության պատվավոր նախագահ Ն. Աղբալյան, ելույթ ունենալով «Եղիշե Չարենց իբրև նորագույն բանաստեղծ», շատ կոնկրետ կերպով ուրվագծեց անձանոթ բանաստեղծի բոլոր երկերու բնույթը և մանալանդ անոր նորագույն գրական ուղղությունը ռուսահայ գրողներու շարքին մեջ: Նա, վերջին տաս[ը] տարվա ընթացքին տիրող Տերյանի մելամաղձոտ և տարտամ

³ Թումանյան 1987, 162–163:

⁴ «Հայաստանի ծայն», 30.10.1919, թիվ 9:

Գասպարյան Դ.

տոնեն ազատվելով, ստեղծած է մի նոր տեսակի գրականություն, որ մեր նոր սերնդի հերոսական ընդունակությունները կը ցուցադրե և վեր կը հանե:

Հետո արտասանեցան երկու ոտանավորներ, որոնցմե առաջինը, որ արտասանեց օր. [տիկին] Ա. Տիգրանյան, թյուրքահայ բանաստեղծ Վ. Թեքեյանի գրչին կպատկաներ՝ «Կ'անձրևե, տղաս»: Հեղինակը, որ ներկա էր, արժանացավ բուռն ծափահարության, որուն պ. Թեքեյան պատասխանեց մի քանի խոսքով:

Գեղարվեստական բաժնին մեջ նվագվեցան քանի մը կտորներ պիանոյի վրա ջութակի ընկերակցությամբ:

Երեկոյթի տպավորություն բավական լավ էր, բայց Երևանի ինտելիգենտ հասարակությունը շատ աչքի չէր ընկներ այնտեղ⁵:

Հանրային կրթության և արվեստի նախարար Նիկոլ Աղբալյանը խոսում է մեկուկես ժամից ավելի, խոսքի մեջ ընթերցում է Ե. Չարենցի գրքերից հատվածներ:

Նախագահել է Վահան Խորենին, ով «զգաստացնելու» սպառնալիքով դիտողություն է արել բանախոսին, երբ ծափահարությունների ներքո անցել է «Սոմա»-յի և «Ամբոխներ...»-ի վերլուծությանը⁶: Այսինքն՝ պետք չէ կոմունիստական հակումներ ունեցող Չարենցին այդքան մեծարել...

Հոկտեմբերի 16-ին Բաթում-Թիֆլիս ճանապարհով Փարիզից Երևան էր ժամանել Պողոս Նուբարի պատվիրակությունը, որի կազմում էր նաև Վահան Թեքեյանը, ով նույնպես մասնակցում էր երեկոյին: Վ. Թեքեյանը իջևանել էր «Օրիանտ» հյուրանոցում, Հայաստանում մնացել մինչև նոյեմբերի վերջը⁷: «Հայաստանի ծայն»-ը տպագրում է Գ. Մահարու «Այգեկութ» բանաստեղծությունը՝ «Բանաստեղծ բարեկամիս՝ Վահան Թեքեյանին» ուղերձով⁸:

Ե. Չարենցն այդ գրական միջոցառմանը ներկա չի եղել և այդ մասին տեղեկացել է մամուլից: Այդ կապակցությամբ 1922-ին «Չարենց-նամե»-ում գրում է.

Էլ ինչո՞ւ ծիծաղեր հոգիս,
Երբ Նիկոլ Աղբալյանը մի օր
Սարսելով դահլիճն ու ֆոյեն–
Ավետեց ամբողջ աշխարհին,

⁵ «Հայաստանի ծայն», 30.10.1919, թիվ 9:

⁶ Տե՛ս «Ջահակիր», 1963, թիվ 12:

⁷ Տե՛ս «Հայաստանի ծայն», 19.10.1919, թիվ 7:

⁸ Տե՛ս «Հայաստանի ծայն», 19.10.1919, թիվ 7:

Որ ծնվել է մեծ մի պոետ...

Որ ծնվել է երգիչ մի վառ,

Ու բերել է երգեր հրե–

Ցնծա՛, Նաիրյան աշխարհ,–

Ցնծա՛... Եղիշե Չարենց⁹...

Ն. Աղբալյանի հիշողություններից պարզվում է, որ Ե. Չարենցի «Երեք երգ Տիսրադալուկ Աղջկան» և «Դանթեական առասպել» գրքերին 1917-ին ծանոթացել է Բաքվի «Արև» թերթի խմբագրատանը։ Նրան հրավիրել էին մի հավաքույթում բանախոսելու, բայց դեռ ժամանակ կար։ Ժամանակն անցկացնելու համար ծանոթանում է պատուհանի գոգին լցված հայերեն, ռուսերեն գրքույկներին, որոնց մեջ էին նաև Ե. Չարենցի հրատարակությունները։ «Վերնագրերը ուշագրավ էին։ Տեսա մի նոր մարդ, նոր նյութ, նոր վերաբերում և վարժ տաղաչափություն։ Մի տաղանդավոր սկսնակ։ <...>։ Տարվեցա ընթերցումով, մոռացա հավաքույթ և սպասում։ Վ. Տերյանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականության հորիզոնում։ Որոշեցի առաջին իսկ առիթով գրեմ այս նոր հեղինակի մասին»¹⁰։

Որոշում է... բայց ժամանակները խառն էին։ Մինչ պահը կհասներ, անցնում է երկու տարի։ Դասախոսությունը կայացել է «...խուն բազմության ներկայության։ Նոր բանաստեղծի անունն ընկավ ամենքի բերանը <...>, և Չարենցը դարձավ մի անուն»¹¹։

Ըստ Ստ. Զորյանի՝ դասախոսությունից մի քանի օր հետո Ե. Չարենցն արդեն Երևանում էր և ներկայանում է Ն. Աղբալյանին։ Աշխատանքի նշանակվելուց հետո նրանց միջև տեղի է ունենում այսպիսի խոսակցություն.

«– Ի՞նչ պիտի անեմ,– հարցնում է Չարենցը...

– Կնստես և կգրես ինչ կարող ես։

– Ես գործի մասին եմ հարցնում, պ. Աղբալյան։

– Գործը կանեն անողները։

Նույն պահի մեկ այլ հուշագրի մտաբերում.

«– Հը, եկե՛լ ես, Չարենց, լավ ես արել, <...> լսել եմ նյութական վիճակդ շատ փայլուն չէ, և դիմում ես կատարել ուսուցչական մի պաշտոնի համար... Չէի՞ր ուզենալ ինձ օգնել կրթական վերակառուցման գործում։

⁹ Չարենց 1955, 424։

¹⁰ «Չարենցի հետ։ Հուլիս» 1997, 61–62։

¹¹ «Չարենցի հետ։ Հուլիս» 1997, 61–62։

Գասպարյան Դ.

– Ինչպես թե, պարոն նախարար, ես որ բացարձակ բան չեմ հասկանում այդ գրասենյակային աշխատանքից...

– Եվ կարիք էլ չկա, որ հասկանաս, ես կտամ մի սեղան, կնստես առաջը ու կգրես բանաստեղծություններ, այդ քեզ համար ծանոթ աշխատանք է, չէ <...>, կստանաս մի ռոճիկ, որ քեզ ապրուստի հոգսից կազատի, իհարկե շատ համեստ, ինչ-որ ստանում է մի ուսուցիչ կամ մի նախարար <...>: Իսկ աշխատանքը, որ իրավունք ունեն քեզանից պահանջելու իբրև պաշտոնյա, այդ կթողնես ինձ, ես քո տեղը կկատարեմ <...>: Քո անելիքը շատ ավելի էական գործ կլինի հայ ժողովրդի համար»¹²:

Ի՞նչ էր անում Ե. Չարենցը նախարարությունում. Ն. Աղբալյանի տեղակալ Պողոս Սոտնիկյանը բողոքել է. «Դուք նրան երես եք տալիս, պարոն Աղբալյան, ոչ մեկի չի ենթարկվում, ոչինչ չի անում, նախարարության իրացանկն էլ դեռ չի կազմել»¹³: Բարեհոգի ժպիտով Ն. Աղբալյանը պատասխանում է. «Դուք խելոք մարդ եք, պարոն Սոտնիկյան, Չարենցը վաղը կարող է գրել մի բանաստեղծություն, որն ավելին կարժենա, քան նախարարությանդ ամբողջ փտած գույքը... Հանգիստ թողեք նրան»¹⁴:

Անդրադարձներ

Ե. Չարենցի այս օրերի կերպարը՝ ըստ Նշան Հովհաննիսյանի. «Հազիվ 18 տարեկան պատանիի մը տպավորությունը կ'ըներ, վարանոտ նայվածքով, քիչ մը խոնարհ, որպես թե ամաչկոտ, բայց ամբարտապան ժպիտ մը շրթներուն վրա, որ ամեն զինք տեսնողը առաջին իսկ առիթով կը խրչտեցներ ու հեռու կը պահեր իր անձեն»¹⁵: Ներկա է եղել Ն. Աղբալյանի երկու ժամ տևած բանախոսությանը, ինչը համարում է Չարենցի «ռեկլամ»: Վերաբերմունքից երևում է, որ առանձնապես բարեհաճ չէ Չարենցի նկատմամբ, նաև թույլ է տալիս սխալներ՝ «Չարենցը, որ նախարարին տանը կ'ապրեր...»¹⁶:

Նախարարությունում աշխատած ժամանակ Երևանում Ե. Չարենցն ապրել է Դերենիկ Դեմիրճյանին հատկացված արվեստի վարչության գրասենյակում, ապա՝ Նազարովսկայա փողոցում. կիսամութ մի փոքրիկ ներքնահարկ՝ մի մահճակալ, մի սեղան և երկու աթոռ:

¹² Աղբալյան 1952, 17:

¹³ Անանյան 1987, 57 (ըստ Կարո Մելիք-Օհանջանյանի):

¹⁴ Անանյան 1987, 57:

¹⁵ «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

¹⁶ «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

Ն. Աղբալյանի զեկուցումից հետո Ե. Չարենցն ուներ պատրաստի երկու ախոյան՝ հանձինս ՀՅԴ Երևանի կոմիտեի քարտուղար ու գրական ընկերության փոխնախագահ Վահան Խորենիի և հատկապես Ավետիս Ահարոնյանի որդու, հանրապետության դատախազ Վարդգես Ահարոնյանի, ով Արմենուի Տիգրանյանի ամուսինն էր։ Վարդգես Ահարոնյանի հետ լարվածությունն ավելանում ու խորանում է Ե. Չարենցի՝ Արմենուի Տիգրանյանով հոգեխռով տարվածությամբ։ Խորացել է նաև Խորենի - Չարենց թշնամանքը. խորհրդայնացումից հետո մի երեկոյթի ժամանակ, որտեղ եղել է նաև Արփենիկը, արվեստի կոմիսար Ե. Չարենցը հանել է մաուզերը և կրակել պատին փակցված Վահան Խորենիի նկարին¹⁷։

Նշված երեկոյին Վ. Թեքեյանի ելույթից հետո Արմենուի Տիգրանյանը արտասանել է իր բանաստեղծություններից մեկը։

Մամուլի արձագանքներից. «Դասախոսը շատ հիացմունքով խոսեցավ նոր բանաստեղծի մասին, դրվատեց անոր բանաստեղծական իսկական արժանիքն ու տաղանդը, նորագույն բանաստեղծների շարքի մեջ ամենաառաջնագույն տեղը տվավ անոր։ Տեղյանեն վերջ Չարենցն է, ըսավ, մեր իրականության մեջ ամենաուժեղ նոր և ինքնատիպ բանաստեղծը...»¹⁸։ Այստեղ, որպես զեկուցման օր, նշվում է հոկտեմբերի 18-ը։ Գառնիկ Անանյանն ամսաթիվ չի նշում, այլ միայն՝ «1919-ի հոկտեմբերին»¹⁹։

«19 թվին հանդես եկավ մի այլ քնարերգակ՝ Եղիշե Չարենց։ Մեր ականավոր քննադատ Ն. Աղբալյան մի հմտալից վերլուծությամբ դասեց նրան հայ գրական ընտանիքի մեջ և այն էլ բավական պատվավոր տեղ, տալով միաժամանակ երիտասարդ բանաստեղծին մի լայն վկայական, - գրական նոր ու արթնացող տրամադրության կրողն ու երգիչը լինելու պատիվը...»²⁰։

«Հիացմունքով լսեցինք Աղբալյանին. դասավորեց Չարենցի բանաստեղծությունները երեք մասի, խորունկ վերլուծում ըրավ, խոսեցավ մեկուկես ժամից ավելի...»²¹։

Ներկա է եղել նաև Գ. Մահարին²², ով այս շրջանակի մեջ էր և օրեր անց մասնակցել է Վ. Թեքեյանի պատվին Նորքում կազմակերպված խնջույքին։

¹⁷ Տե՛ս «Չարենցի հետ։ Հուլիս» 1997, 216։

¹⁸ «Ժողովուրդ», 22.10.1919, թիվ 116։

¹⁹ Անանյան 2002, 69։

²⁰ «Յառաջ», 21.02.1920, թիվ 39։

²¹ «Ջահակիր», 1963, թիվ 12։

²² Տե՛ս «Հուլիս Եղիշե Չարենցի մասին», 1986, 116։

Գասպարյան Դ.

Ն. Աղբալյանի զեկուցմանը ներկա է եղել Կարինե Քոթանջյանը Շավարշ Բասենցյանի հետ, ով, ըստ Կ. Քոթանջյանի, հոր հոգեորդին էր, այլ կերպ՝ իր խորթ եղբայրը: Չեկուցողն ասում է, որ չգիտի՝ գրողը ո՞րք է թե մեռած և ենթադրում է, որ պետք է լինի 40 տարեկան: Չեկուցումից հետո ելույթ է ունենում Կ. Քոթանջյանը, ասում բանաստեղծի տարիքը և աշխատավայրը: Հաջորդ օրն էլ հեռագրում է Ե. Չարենցին և կանչում Երևան: Ըստ նրա՝ մի քանի օրից Չարենցը Երևանում էր, բայց բանաստեղծը Երևանում էր 1920-ի հունվարի 26-ին:

Կ. Քոթանջյանը նաև ավելացնում է. «Հոնորար կորզելու համար Աբովը Չարենցին առանց ամոթի Բաշթադիկլարում պահեց մինչև գարուն, երբ գիտեր, որ Աղբալյանի դասախոսությունից հետո ես նրան հեռագրով կանչել եմ»²³:

Ստ. Զորյան. «Դրանով արդեն Չարենցը հռչակվեց մի օրում: Մինչ այդ, եթե շատ սակավ մարդիկ գիտեին Չարենցին, որպես բանաստեղծի, և այն էլ մեծ վերապահությամբ, այդ բանախոսությունից հետո արդեն ամենքն իմացան և համոզվեցին, որ հանձին Չարենցի մենք ունենք մի նոր իսկական բանաստեղծ... Նրա բանաստեղծությունների գրքույկներից հազիվ մի քանի օրինակներ կային Երևանում, և դրանք խլում էին իրար ձեռքից: Այս էլ պետք է ասեմ, որ Աղբալյանը Չարենցին *նոր բանաստեղծ* համարելով՝ առանձնապես շեշտեց այն, որ նա հնչեցնում է նոր մոտիվներ, բերում է նոր հույզեր և նոր մոտեցում երևույթներին...<...>: Իսկ ինքը՝ բանաստեղծը, չկար մեջտեղ. նա Երևանում չէր. մինչդեռ ամենքն ուզում էին տեսնել, թե ո՞վ է այդ երիտասարդը, այդ խանդով, ավյունով ու թափով պոեմների հեղինակը»²⁴:

Այդ օրերին Ե. Չարենցի մասին դրվատական խոսքեր է ասել նաև Լևոն Շանթը:

Չարենցը ՀՀ նախարարությունում

Ամիսների ուշացումով, քանի որ ուսուցչություն էր անում Կարսի Բաշթադիկլար գյուղում և կտրված էր մայրաքաղաքում կատարվող անցուդարձից, 1920 թ. հունվարի 26-ին Ե. Չարենցը գալիս է Երևան, ներկայանում Նիկոլ Աղբալյանին և նշանակվում Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարարության հատուկ հանձնարարությունների կոմիսար²⁵: Հրամանը տրվել է հունվարի 1-ով՝ հետին թվով, որպեսզի բանաս-

²³ «Չարենցի հետ: Հուլիս», 1997, 44:

²⁴ Զորյան 1985, 311–312: «Հուլիս եղիշե Չարենցի մասին», 1986, 68–69:

²⁵ Տե՛ս **Չարենց** 1959, 273:

տեղծը կարողանա օգտվել ամսվա ընթացքում աշխատակիցներին տրվող սննդի չափաբաժնից:

Ըստ Ն. Աղբալյանի «Եղիշե Չարենցն ու ես» հուշի, «Մտավ աղքատիկ հագուստով մի նիհար երիտասարդ, անխնամ մազերով, մի գլուխ վտիտ ուսերին, դեմքի մորթը դժգույն ու քաշված և քիթը մեծ ու սուր: <...>: Լրագրի մեջ կարդալով դասախոսության մասին, թողած է պաշտոնատեղին և եկած է Երևան: Ասացի, որ նախարարությանս նախահաշվի մեջ նշանակված է մի պաշտոն. «անձնական քարտուղար»: Այդ պաշտոնի համար մարդ չեմ հրավիրած. ես ինքս եմ իմ քարտուղարը, մարդու կարիք չունիմ: Բայց հիմա ես ձեզ նշանակում եմ այդ պաշտոնին: Շենքիս մեջ ունեմ մի ազատ սենյակ. կարող եք այնտեղ ապրել: Բայց ձեր «պաշտոնն» արդարացնելու համար պետք է մի բան անեք. կազմեք նախարարությանս շենքի իրացանկը: Դուք ազատ եք, երբ ուզեք՝ եկեք պաշտոնի»²⁶

Նշանակման հրամանը ստորագրել է Ն. Աղբալյանը: Նրա նպատակն էր՝ «հնար տալ ապրելու և իր կոչումին հետևելու»: Աշխատավայրը գտնվել է Նալբանդյան 58 հասցեում:

Հունվարի 1-ից չէր կարող լինել Երևանում, քանի որ «Օրիորդ Աշխենին» բանաստեղծությունը գրել է հունվարի 15-ին՝ Կարսում, և նույն օրն էլ նույն տեղում նրան է նվիրել նշված գրքերը:

Ըստ Ալ. Զաքարյանի՝ Կարսից արդեն անվերադարձ դուրս է եկել 1920 թ. հունվարի 23–25-ի միջակայքում, «Երևան է հասել հունվարի 25–26-ին, կեսօրից առաջ»²⁷: Ըստ Գառնիկ Անանյանի՝ Չարենցը պաշտոնի է նշանակվել հունվարի 26-ին²⁸: Ավելացնենք, որ նախապես Գ. Անանյանը սխալվել էր. «1919-ի դեկտեմբերին Ե. Չարենցը գալիս է Երևան»²⁹:

Շարունակելով կրթալուսավորչական գործունեությունը՝ Ն. Աղբալյանը 1920 թ. հունիսի 6-ին Խորհրդարանի դահլիճում հանդես է գալիս «Հայ գրականության ապագայի մասին» զեկուցմամբ: Հայ գրականության գալիք օրվա մտահոգությունը օրախնդիր հարց էր, որ, Վ. Տերյանից ու Ն. Աղբալյանից բացի, Եղեռնից առաջ «Վաղվան գրականություն» կարգախոսով արծարծում էին նաև արևմտահայ գրողները:

²⁶ Աղբալյան 1997, 330:

²⁷ Զաքարյան 1997, 573, 585:

²⁸ Անանյան 1980, 59:

²⁹ Անանյան 1979, 148:

Գասպարյան Դ.

1920 թ. հունիսին Երևանում լույս է տեսնում Չարենցի «Բոլորին, բոլորին, բոլորին (Երեք ռադիոպոեմ)» գիրքը (14 էջ), որտեղ զետեղված են «Նայիրի երկրից», «Դեպի ապագան», «Բրոնզե թևերը կարմիր գալիքի» ռադիոպոեմները (թվագրել է 1920, մարտ-հունիս):

Հոկտեմբերյան հեղափոխության լուրը Սմոլնիից աշխարհում տարածվեց հենց այդ կոչով. «Всем! Всем! Всем!»:

Ըստ Գ. Մահարու՝ գիրքը պայթեց ռումբի պես և թողեց անմոռանալի տպավորություն³⁰: Պոեմները Ա. Խանջյանն արտագրում է ծոցատետրի մեջ: Ե. Չարենցը կերտում է իր պատմական կերպարը և այդուհետև դառնում իր օրերի պատմիչ.

Ե՛ս – Ե՛ս եմ նորից.–

Դարերից եկած անհո՛ւն մի պոետ–

Եղիշե Չարենց–

Նայիրի երկիր, քո երգիչը վառ,

Օրհներգուն պայծառ

Ու զավակը մեծ...

Ե՛ս – Ե՛ս եմ նորից.–

Ոսկի երակը հընամյա ցեղիս,

Իմ ջլաբազուկ հաղթ ժողովրդի

Օղակը վերջին³¹:

Թեև 1920 թ. հունիսի 1-ին Ե. Չարենցը «Խնդիր»-ով դիմում էր հանրային կրթության և արվեստի «մինիստրին»՝ ազատվելու հատուկ հանձնարարության կոմիսարի պաշտոնից, բայց գրքի տպագրությունը կազմակերպում է Նիկոլ Աղբալյանը:

Ազատման դիմումի պատճառը քաղաքական անվստահությունն էր, որովհետև, որպես կոմունիստ, մասնակցել էր մայիսյան ցույցին, անգամ ենթարկվել հետապնդումների: Ազատման հրամանը հունիսի 4-ին (թիվ 126) ստորագրել է մայիսի 16-ից Ն. Աղբալյանին փոխարինած նախարար Գևորգ Ղազարյանը: Ըստ այդմ՝ հունիսի 1-ից, «...համաձայն իր խնդրի»³², Ե. Չարենցն ազատվում է պաշտոնից: Ն. Աղբալյանն այդ ժամանակ գործուղվել էր Կարս՝ մայիսյան հուզումների կապակցությամբ ժողովրդին հանգստացնելու համար: Իսկ Կարսը Ն. Աղբալյանի համար հերթական քաղաք չէր. նա եղել

³⁰ Մահարի 1967, 401:

³¹ Չարենց 1963, 98–99:

³² Գասպարյան 2022, 97:

էր 1917-ին Թիֆլիսում հիմնադրված «Ռազմիկ» շաբաթաթերթի խմբագիրը, որի վերջին համարները 1918-ին լույս տեսան Կարսում:

1920 թ. փետրվարի 3-ին Ե. Չարենցը վերցրել է մի «Վկայական», ըստ որի՝ հունվարի 1-ից վարում է հատուկ հանձնարարությունների կոմիսարի պաշտոնը³³:

Մինչև խորհրդայնացում, ըստ «Համառոտ կենսագրության», Երևանում Ե. Չարենցն աշխատել է որպես մանկատների ուսուցիչ: Ըստ 1923 թ. օգոստոսի 11-ի հարցաթերթիկի՝ «1919 / VII – 1920 / XII, 1 տարի 5 ամիս» նա որպես ուսուցիչ, աշխատել է Երևանի Ամերկոմի ուսումնարանում³⁴:

Նախարարությունից հեյրո

Նախարարությունից ազատվելուց հետո Օհան Կարոյի միջնորդությամբ երկրորդ որբանոցում Ե. Չարենցին աշխատանքի է տեղավորել Նշան Հովհաննիսյանը, ով հետագայում հանդես է եկել «Եղիշե Չարենց: Անձնական հանդիպումներ» հուշագրությամբ. «Չարենցն ալ «դաստիարակ» եղավ Վեքե-լեվսկայա փողոցի որբանոցին մեջ, ուր էր նաև մեր բնակարանը»³⁵: Մինչ այդ նա աշխատել է նաև 13-րդ որբանոցում, որտեղից ազատվել է հունիսի 1-ին:

Դաստիարակ լինելու հետ մեկտեղ, Ե. Չարենցը մայրենիի և աշխարհագրության ուսուցիչ էր Երևանի ամերիկյան երրորդ մանկատան դպրոցում: Որբերի տրամադրությունը փոքր-ինչ բարձրացնելու համար դասամիջոցներին բաժնում նրանց հետ շուրջպար է բռնել:

Հերթական աշխատավարձն ստանալուց հետո իր գրվածքներով հետաքրքրված մանկատան սաներին՝ Հենրի Գաբրիելյան, Գևորգ Պարիս (Պարոնիկյան), Հովհաննես Կանտոյան, հրավիրում է «Ֆրանսիա» պանդոկ՝ ընթրիքի:

Այս մանկատանն էին նաև Խորեն Աճեմյանը (Ռադիո), Ադո Ադոյանը: Ե. Չարենցը նրանց հետ անցկացնում է գրական պարապմունքներ. քննարկում է Հակոբ Հակոբյանի, Գառնիկ Քալաշյանի գործերը: «Իր ստեղծագործությունները Չարենցը մեզ չէր կարդում՝ հավանաբար զգուշանալով բոլշևիկյան քա-

³³ **Չարենց** 2017, 436:

³⁴ **Չարենց** 2017, 287:

³⁵ «Ծիածան», 1939, թիվ 2, 22:

Գասպարյան Դ.

րոգչության մեղադրանքից...»³⁶: Պատերազմի ժամանակ որբերին տարել են «ցեյխահաուզներ՝ ռազմաճակատի համար փամփուշտներ մաքրելու»³⁷:

Արշալույս Ջանիկյան. «Ես բախտ եմ ունեցել Չարենցի հետ ուսուցիչ լինելու, նրա հետ ապրելու 1920 թվականի խառնաշփոթ, ողբերգական օրերը:

Դպրոցը՝ կազմակերպված Երևանի հիվանդ երեխաների ամերիկյան մանկատանը կից, բաղկացած էր երեք դասարանից, հետևյալ ուսուցչական կազմով. երրորդ դասարանի դաստիարակ-ուսուցիչ Եղիշե Չարենց, երկրորդ դասարանի ուսուցչուհի Արփիկ Աստվածատրյան (հետագայում՝ Չարենց), առաջին դասարանում՝ ես:

Բանաստեղծ Չարենցը դարձել էր ուսուցիչ և որբանոցի կիսաքաղց երեխաներին հայոց լեզու, թվաբանություն էր սովորեցնում՝ սնվելով մանկատան խոճուկ սնունդով, և միշտ համոզված, որ դա ժամանակավոր երևույթ է:

Որբանոցի կառավարչուհին՝ Լուսինթագ Խանիկյանը, գնահատելով Ե. Չարենցի արժանիքները, հնարավորություն էր ստեղծել, որ նա կարողանա նաև ստեղծագործել, գրել. «Որբանոցում նրա համար առանձնացրել էր մի փոքր սենյակ»: Այլևայլ գործերի հետ մեկտեղ այդ սենյակում է ծնունդ առել «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տաղը: Արփիկը, Արշալույսը, Լուսինթագը եղել են բանաստեղծի նոր գործերի առաջին ունկնդիրները: Նրանց համար ծեռքերի թափահարումներով, օրորումներով արտասանել է նաև Տերյան. «Հետո մոայլվում էր, նյարդայնանում, ուզում էր մի բան ջարդել: Մի անգամ, հիշում եմ, ծեռքից գցեց բաժակը, կոտրեց, հետո զոջաց, խաղաղվեց, ժպտաց մանկան անմեղությամբ (Խորեն Ռադիո, «Չարենցը որպես բանաստեղծ և անհատականություն»³⁸:

Ըստ Ա. Ջանիկյանի՝ Ե. Չարենցը պատմել է Կարսի կյանքից, հիշել բերդը, գետը...

Եկավ կարմիր սահմանաբաժանի օրը: Ն. Աղբալյանը մնաց: 1921-ին բռնկվեց Փետրվարյան ապստամբությունը: Փետրվարի 9-ին Ն. Աղբալյանին ձերբակալեցին. «Ավագ որդու պատմելով՝ ձերբակալողների հետ է եղել նաև... Չարենցը: - Եկել էր, որ հայրիկին չնեղացնեն,- որդիների եզրակացությունն է սա»³⁹: Ազատվում է փետրվարի 18-ին: Ուղարկում են Էջմիածին⁴⁰:

³⁶ Գասպարյան 2023, 316:

³⁷ Գասպարյան 2023, 31:

³⁸ «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, 112:

³⁹ Անանյան 2002, 76:

⁴⁰ Տե՛ս Աղբալյան 1968, 344:

Մնում է Գյուտ եպիսկոպոսի հետ նույն խցում, կարդում էին Նարեկ և Նարեկի՝ Ավետիքյանի ու Նալյանի մեկնությունները: Վերադառնում է ապրիլի մեկին. «...բայց նույն գիշերն իսկ հորդ անձրևի տակ ընդմիշտ թողին մեր աշխարհը»⁴¹: Ըստ որդիներից Ռուբենի՝ գալիս է Դրոն և ընկերոջն ասում. «Վերկացեք, քաղաքը թողնում ենք»⁴²: Լ. Շանթի հետ մեկտեղ հեռանում են երկրից...

Հեռացող ճանապարհներ

Կարմիր սահմանագծից հետո, երբ երկրի իսկական տերերը, մի կերպ հեռանալով իրենց ստեղծած երկրից, դարձել էին աստանդական, Ե. Չարենցը մտաբերում է Թավրիզում ապաստանած Նիկոլ Աղբալյանին և 1923 թ. հունվարի 28-ին նրան ուղարկում երկհատորյակը և նոր լույս տեսած գրքերը: Նախ, նրան զգուշացնում է չհավատալ Վարդգես Ահարոնյանի և այլոց հերյուրանքներին, թե, իբր ինքը, նագանը գոտիկից կախ, Երևանով մեկ առաջին Ն. Աղբալյանին էր որոնում, որ գնդակահարի:

Ընծայագրությունները ջերմ են և մարդկային՝ I հատոր. «Սիրելի Նիկոլ Աղբալյան, ընդունիր իմ գրքերը որպես հարգանքի և համակրանքի նշան, 28. I. 923, Երևան», II հատոր. «Նիկոլ ջան, ես ոչ մի համար չունեի իմ այս հատորներից, որովհետև առիթ հանդիսացավ Մ-ը՝ զիջեց իր համարները. Ընդունիր իմ այս նվերը որպես նշան հարգանքի և համակրանքի. Քո՝ Եղիշե Չարենց, 923, I., 28. Երևան»⁴³:

Հաջորդ գրքերից մեկը «Ռոմանս անսեր»-ն է՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին, իմ առաջին ուսուցչին, որին ես երբեք չեմ մոռանա և չեմ դադարի հարգել», մյուսը՝ «Պոեզոգություն»-ն՝ «Սիրելի Նիկոլ Աղբալյանին՝ շատ սիրով և հարգանքով. Եղիշե Չարենց»⁴⁴:

Ի պատասխան Ե. Չարենցի ուղարկած գրքերի՝ Ն. Աղբալյանը 1923 թ. փետրվարի 9-ին մի զայրալից նամակ է հասցեագրում նրան. «Ստացա գրքերդ: Կարդացի: Շնորհակալություն քեզ ու զիջողին»: Այնուհետև անցնում է սուր քննադատության, անգամ՝ երգիծանքի ու ծաղրուծանակի՝ հատկապես նկատի ունենալով վերջին երկու գրքերը. «Երբ ձեռքս առա «Ռոմանս անսեր»-ը, որ անպատկառ բովանդակություն ուներ և ոգու անկում էր

⁴¹ Աղբալյան 1968, 346:

⁴² Անանյան 2002, 77:

⁴³ «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 64:

⁴⁴ «Չարենցի հետ: Հուշեր», 1997, 64:

Գասպարյան Դ.

ցուցադրում՝ զայրույթս պահել չկարողացա: Իր իսկ անպատկառ ոճով մի նամակ գրեցի և իր նորօրինակ տաղաչափությամբ մի «Պոեզոկարծիք» շաբաթօրեցի [գրքերը բերողի հետ այդ կարծիքներն ուղարկել է Չարենցին]:

Աղքատացումը հոգու, որ դու հանդես ես բերում անպատկառ և կարծում ես թե դրոշ պարզեցիր նոր ու վառ՝ շատ է հին: <...> Շնորհքն իջել է վրադ առանց որ դու պահանջես: Ազնվական ես ծնվել.– պարտքդ ուրեմն իմացիր: <...>: Հարկ չկա, որ քո վերնատուր շնորհքն առնես ու քաշ տաս տիղմերի մեջ... <...>: Վա՛յ քեզ Չարենց, հազար վայ. Ափսո՛ս հայ գրականություն, ավելի ափսոս իմ հույսեր, որ առկայծում են սակայն: Ողջույն գրական՝ Ն. Աղբալյան»⁴⁵:

Հետգրությամբ՝ «Ջրոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ» անդրադարձով, Ե. Չարենցի «Ռոմանս անսեր»-ի ոճով գրում է նրան հեգնող «Պոեզոկարծիք» և ապա շարունակում. «Լսեցի, որ նամակս ու կարծիքս տեղ են հասել: Ասում էին, որ գոհ չէր մնացել և գրածներս համարել էր «անպատկառ»»: Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուն և հետագա գրական հաջողությունները նկատի ունենալով, և վստահ, որ իր նամակն էլ այդ վերափոխման գործում իր դերն է ունեցել, խոսքն ավարտում է գնահատությամբ. «Չարենցը շտկեց իր բարքն ու ստեղծագործությունը»⁴⁶:

Ըստ Ն. Աղբալյանի՝ Ե. Չարենցի «Էպիքական լուսաբաց» գրքում գետեղված «Սիրելի Ա-ին» բանաստեղծությունը, գրված 1929 թ. նոյեմբերի 27-ին, նվիրված է իրեն. «...բանաստեղծությունն ի՛նձ է ուղղված»⁴⁷:

Ես չե՛մ մոռացել քեզ, բարեկա՛մ,
Եվ հիշում եմ քեզ կրկի՛ն, կրկի՛ն,
Ինչպես անցորդը թափառական
Հիշում է միշտ իր անցած ուղին:-
Սիրով է հիշում նա ուղին հին,
Գուցե թախիծով, սակայն երբեք
Նա չի՛ ցանկանա կրկի՛ն, կրկի՛ն
Թողնել հեռուներն ու դառնալ ետ...
Երբ անցած ուղին հուշով անշեջ
Խոցում է, ինչպես կարոտի նետ,-
Խեղդո՛ւմ է նա այդ կարոտն իր մեջ,

⁴⁵ «Չարենցի հետ: Հուլիս», 1997, 63:

⁴⁶ «Չարենցի հետ: Հուլիս», 1997, 63–67:

⁴⁷ «Չարենցի հետ: Հուլիս», 1997, 73:

Որ երբե՛ք, երբե՛ք չդառնա ետ⁴⁸:

Եզրակացություններ

Կան նշանավոր անհատների ճակատագրական հանդիպումներ, որոնք դառնում են պատմական փաստ: Այդպիսին է իր բանաստեղծական ճանապարհի վերելքին գտնվող 22-ամյա Եղիշե Չարենցի և Առաջին Հանրապետության տարիներին Լուսավորության և արվեստի նախարար, հեղինակավոր գրական քննադատ 44-ամյա Նիկոլ Աղբալյանի հանդիպումը, որը տեղի ունեցավ հեռակա կարգով 1919-ի հոկտեմբերին, առկա՝ 1920-ի հունվարի վերջին:

Ն. Աղբալյանը հիացած էր Ե. Չարենցի բանաստեղծություններով ու պոեմներով, ձեռք էր բերել նրա գրքերը և կարդացել: Ե. Չարենցի ստեղծագործությանն անդրադառնալու հարցը քննարկել էր Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանի հետ և, առանց Ե. Չարենցին անձնապես ճանաչելու, նրան նվիրել իր ղեկավարած Հայ գրողների ընկերության 1919 թվականի հոկտեմբերի 16-ի հերթական նիստը: Ն. Աղբալյանը խոսել է մեկ ժամ ու կեսից ավելի և հռչակել Ե. Չարենցին: Նրա զեկուցման առանձին մտքեր պահպանվել են թե՛ մամուլի էջերում և թե՛ հուշագիրների անդրադարձներում: Տպավորությունը ցնցող էր. իսկ այդ զեկուցումից հետո բոլորը որոնում էին Չարենցի գրքերը:

Ե. Չարենցը զեկուցմանը ներկա չէր. 1919-ի աշնանը նա ուսուցչություն էր անում Կարսի մարզի Բաշքյադիկլար գյուղում: Ն. Աղբալյանի զեկուցման մասին տեղեկացել է մամուլից և նրան է ներկայացել ավելի քան երեք ամիս անց՝ 1920 թ. հունվարի 26-ին և մի համեստ պաշտոն ստացել նրա ղեկավարած նախարարությունում: Ն. Աղբալյանն ըստ ամենայնի մտահոգվել է, որ պեսզի այդ դժվար ու ծանր օրերին Ե. Չարենցը գոնե նվազագույն չափով նյութապես ապահովվի և կարողանա ստեղծագործել:

1920 թվականի մայիսյան դեպքերից հետո, երբ Երևանում, Գյումրիում, Կարսում փողոց էին դուրս եկել կոմունիստները, նրանց ճանապարհները բաժանվում են, որովհետև Ն. Աղբալյանը հավատավոր դաշնակցական էր, իսկ Ե. Չարենցը այդ տարիներին՝ խանդավառ կոմունիստ: 1920 թ. հունիսի 1-ին իր դիմումի համաձայն Ե. Չարենցն ազատվում է նախարարությունում զբաղեցրած պաշտոնից և, գլուխը պահելու համար, մանկատներում ուսուցչություն անում:

⁴⁸ **Չարենց** 1968, 115:

Գասպարյան Դ.

Հետազայում Ն. Աղբայանի և Ե. Չարենցի ինչպես քաղաքական, այնպես և գրական ճանապարհները թեև հեռանում են, բայց պահպանվում է մեկը մյուսի հանդեպ ունեցած հետաքրքրությունը: Ե. Չարենցը Պարսկաստանում ապաստանած Ն. Աղբայանին է նվիրում իր գրքերը, Ն. Աղբայանը քննադատում է Երեքի դեկլարացիայի շրջանի նրա ստեղծագործությունները, բայց մնում է նախկին գնահատանքի հիշողությունը և վաղվա հույսը, ինչն էլ հետազայում հեռակա կարգով վերստին մերժեցնում է նրանց:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աղբալեան Ն. 1965, Ամբողջական երկեր, հ. III, Պէյրութ, «Համազգային» հայ մշակ. ընկ., 440 էջ:

Աղբալեան Ն. 1959, Գրական-քննադատական երկեր, հ. I, Պէյրութ, տպ. Լս-ֆօտո-Բէս, 456 էջ:

Աղբալեան Ն. 1952, Դասախոսութիւններ հայ մատենագրութեան մասին, Պէյրութ, 320 էջ:

Անանյան Գ. 1979, Եղիշե Չարենցը և ռուս գրականությունը, Երևանի համալսարանի հրատարակչություն, 344 էջ:

Անանյան Գ. 2002, Նիկոլ Աղբայան, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 312 էջ:

Անանյան Գ. 1987, Եղիշե Չարենց, Երևան, «Սովետական գրող», 388 էջ:

Անանյան Գ. 1980, Չարենցի հետ, Երևան, «Լույս», 156 էջ:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի կյանքը և ժամանակը, Երևան, «Տիգրան Մեծ», 804 էջ + 16 էջ ներդիր:

Գասպարյան Դ. 2023, Չարենց, Երևան, «Տիգրան Մեծ», 404 էջ:

Ջաքարյան Ա. 1987, Եղիշե Չարենց: Կյանքը, գործը, ժամանակը, հ. I, ԳԱԱ հրատարակչություն, 968 էջ:

Ջոյան Ս. 1985, Երկերի ժողովածու, Երևան, «Սովետական գրող» հ. XI, 640 էջ:

Թումանյան Ն. 1987, «Հուշեր և գրույցներ», Երևան, «Սովետական գրող», 320 էջ:

«Ժողովուրդ», 22.10.1919, թիվ 116:

«Լևոն Շանթ: Մարդը և գործը», 2019, Երևան, «Տիգրան Մեծ», 292 էջ:

Ն. Յ. (Նշան Յովհաննիսեան), Եղիշե Չարենց. Անձնական հանդիպումներ: «Ծիածան», 1939, թիվ 2, Պէյրութ:

«Հայաստանի կոոպերացիա», Երևան, 15.10.1919, թիվ 16:

Հ. Ս., Հայաստանի Գրական ընկերության Բ. երեկոն, «Հայաստանի ծայն», Երևան, 30.10.1919, թիվ 9:

Հայաստանի Գրական ընկերության Գ. երեկոն, «Հայաստանի ծայն», 19.10.1919, թիվ 7:

«Հուշեր Եղիշե Չարենցի մասին», 1986, Երևան, Հայպետհրատ, 394 էջ:

Մահարի Գ. 1967, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Հայաստան», 412 էջ:

«Յառաջ», Երևան, 21.02.1920, թիվ 39:

Չարենց Ե. 1955, Ամբողջական գործը, Պէյրուֆ, հ. Ա, «Սեւան» տպ., 432 էջ:

Չարենց Ե. 1963, Երկերի ժողովածու, հ. II, Երևան, ԳԱ հրատարակչություն, 400 էջ:

Չարենց Ե. 1968, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, ԳԱ հրատարակչություն, 626 էջ:

«Չարենցի հետ: Հուշեր», 1997, Երևան, «Նաիրի», 424 էջ:

Չարենց Ե. 2017, Գիրք մնացորդաց, Երևան, «Տիգրան Մեծ», 486 էջ:

«Զահակիր», 1963, Պէյրուֆ թիվ 12:

ЕГИШЕ ЧАРЕНЦ – НИКОЛ АГБАЛЯН

ГАСПАРЯН Д.

Резюме

Ключевые слова: Егише Чаренц, Никол Агбальян, Республика Армения, парламент, литературный клуб «Пандок», литературное общество Армении, «Радиопоэма».

28 мая 1918 года была провозглашена Республика Армения. В новосозданном правительстве известный литературный критик Никол Агбальян курировал сферу искусства и образования. Им были созданы Литературное общество Армении и литературный клуб «Пандок».

Н. Агбальян принимал активное участие в литературной жизни республики. 16 октября 1919 г. Литературное общество было приглашено в парламент. По данным периодики, в своем выступлении Агбальян представил Чаренца и его творчество.

После этого вечера имя Чаренца стало востребованным.

Сам Чаренц не присутствовал в зале, о выступлении Агбальяна он узнал из прессы, а спустя три месяца он приехал в Ереван и встретился с Агбальяном, предложившим ему скромную должность в министерстве. Это было сложное время. Н. Агбальян дал Чаренцу возможность жить и творить.

За этот период Е. Чаренцем было создано много произведений, в частности, «Радиопоэма», изданная в 1920 г. при поддержке Н. Агбальяна.

Чаренц проработал в министерстве до 1 июня 1920 года. Поэт присоединился к коммунистическим силам, вместе с которыми приветствовал советизацию Армении и стал комиссаром искусств.

После падения Республики Армения Н. Агбальян покинул Армению, но поэт и критик продолжали сотрудничать.

Литературные связи этих двух знаковых представителей армянской литературы являются памятным фактом в истории армянской литературы.

YEGHISHE CHARENTS – NIKOL AGHBALYAN

GASPARYAN D.

Summary

Keywords: Yeghishe Charents, Nikol Aghbalyan, Republic of Armenia, parliament, Literary Club “Pandok”, Literary Society of Armenia, “Radiopoem”.

Renowned Armenian literary critic Nikol Aghbalyan noticed the literary success of emerging genius Yeghishe Charents from the very beginning of his literary career and intended to dedicate a public lecture to him. He discussed this matter with Hovhannes Tumanyan as early as 1917 and received his support. On May 28, 1918, the Republic of Armenia was proclaimed, and Nikol Aghbalyan was one of its fighters. In the newly established government, he headed the sphere of arts and education and engaged in vigorous activities: he created the Society of Armenian Writers, founded the activities of the literary faction “Pandok”. In 1919, on October 16, the Literary Society was invited to an evening in the Parliament hall. According to the press, Aghbalyan spoke for about an hour and a half and, apparently, presented Charents, a new poet, from both thematic and poetic perspectives. The evening turned out to be very warm. Various literary authorities spoke at the event. After that evening, Charents’ name became in demand. Charents himself was not present that evening, as he was busy teaching in the village of Bashkyadiklar of Kars province. He learned about Aghbalyan’s speech from the press, and more than three months later, he came to Yerevan and introduced himself to Aghbalyan. Aghbalyan warmly welcomed him and offered him a modest position in the ministry. Those were difficult times. Aghbalyan gave Charents the opportunity to live and create. During this time, Charents wrote many of his best works, among which “Radiopoem” was published as a separate book in 1920 with the support of Aghbalyan. Charents worked in the ministry until June 1, 1920. Before that, he joined the communist forces, welcomed the

Եղիշե Չարենց – Նիկոլ Աղբալյան

Sovietization of Armenia together with them, and became the commissar of arts. After the fall of the Republic of Armenia, Aghbalyan somehow left Armenia with other writers. After that, although Charents and Aghbalyan held different positions, they continued to collaborate. Charents sent him his new books, and Aghbalyan read and reviewed the demands of post-classical art. The literary connections of these great figures are a memorable fact in the history of Armenian literature.